ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ,ԳԻՏՈՒԹՅԱՆ , ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

27 օգոստոսի 2021 թվական

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ՀՐԱԶԴԱՆ 2021

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ԿՏՊՔ-ի մանկավարժական խորհրդի իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը:

1.2. Մանկավարժական խորհրդի կանոնակարգը քննարկում և ընդունում է քոլեջի կառավարման խորհուրդը:

1.3. Մանկավարժական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են նույն կարգով:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

2.1. Մանկավարժական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ԿՏՊՔ-ի տնօրենը, ով ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է: Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 1-ը: Մանկավարժական խորհրդի անդամների անվանական կազմը հաստատում է քոլեջի տնօրենը:

2.2.ԿՏՊՔ-ի մանկավարժական խորհուրդը քոլեջում կոլեկտիվ ղեկավարման մարմին է , որը կոչված է նպաստելու ԿՏՊՔ-ում տարվող ուսումնական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

2.2. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, ամբիոնի վարիչները, կաբինետի վարիչները, կուրսղեկները, արտադրական ուսուցման վարպետները և բոլոր դասախոսները: Մանկավարժական խորհրդի իրավասությունները դադարում են ուսումնական տարվա ավարտից հետո: Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք պետք է լինեն տարին 2-3 անգամ:

2.3.Մանկավարժական խորհուրդը իր կազմից քվեարկությամբ, կառավարման խորհրդի 20 տոկոսի չափով՝ 2 հոգի, առաջադրում է որպես քոլեջի կոլեգիալ կառավարման անդամ:

3.ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1.Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝

- քոլեջի զարգացման ծրագիրը և հանդես գալիս առաջարկությամբ
- մասնագիտական պետական չափորոշչին համապատասխան ծրագրերի իրագործման հարցերը

- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց տարվող արտալսարանային և արտաքոլեջային աշխատանքների կազմակերպ հարցերը
- ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր (ֆինանսա կազմակերպչական)
- քոլեջի աշխատանքային ռեժիմի, աշխատանքային շաբաթվա տևողությ աշխատողին խրախուսելու վերաբերյալ հարցերը և առաջարկությու ներկայացնում հաստատության կառավարման մարմիններին:
- քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ուսումնական պրոցեսի առնչվող հարցերի շուրջ,

  ա) ուսումնական պրոցեսի կազմակերպում, պլանավորում,

  բ)ավարտական պետական և ընթացիկ քննությունների ու ստուգարք կազմակերպման, անցկացման արդյունքների ամփոփում,

  գ) ուսանողների քոլեջից հեռացում և վերականգնում,

  դ)ուսումնական և այլ տիպի պրակտիկաների կազմակերպման ընթաց արդյունքների ամփոփում,

  ե) քոլեջի ուսումնական գործունեության հետ կապված այլ ընթացիկ հարցեր:
- քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ուսումնամեթոդ գիտաժողովների, սեմինարների և այդ տիպի այլ միջոցառումների կազմակերպչ հարցերի վերաբերյալ:
- քննարկում և առաջարկություններ է ներկայացնում տնօրենին ֆինանսատնտեսական գործունեության հրատապ լուծում պահանջող հա վերաբերյալ:
- քննարկում է ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները:

3.2.Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝

- սովորողներին կուրսից-կուրս փոխադրելու կամ հեռացնելու մասին
- սովորողներին քննություններին թույլատրելու մասին
- սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու մ

- անհարգելի բացակայությունների, ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին
- գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին խրախուսելու մասին
- փոխադարձ դասալսումների արդյունքում ի հայտ եկած հարցերի վերաբերյալ:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն՝ Գ. Գևորգյան